

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյալայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղաբայից ղեկում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր ըստին 2 կոպէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Մայիսի 31-ին

Սկսւոյ 22-ին, կիրակի օրը, օծվեցաւ և փառաբանուեցաւ ճանդիւղով բացվեցաւ Բաթում-Սամուրի-ճանգի երկաթուղին, նոյն օրից ընդունում են ճանապարհորդներին և ապրանք: Բացման օրից կարծես Բաթումը կերպարանաւորու ինչպէս: Այժմ կարելի է ասել, որ մեր Բաթումն ընկաւ բարեկարգ նաւահանգիստ, քաղաքների շարքում: Կայարանը, որ ամենական ծախում և մարտային հսկողութիւնն են Խաղաղութան ճանապարհորդների վրա ժամանակաւորապէս շինեցին նորաշէն ուսուցչական եկեղեցուն, որը նախկին հայկ. պահստան էր տաճկաց, բաւական յարմարաւոր տեղ է: Այդ կայարանի կողքում մօտիկ գտնվում է Բաթումեւի ղեկեղիկ և ընդարձակ շինութիւնը լայնատարած հրապարակի վրա, այդ շինութիւնում տեղ է բռնել տեղիս առաջին հիւրանոցը «Քրքանու», որ բաւական լայն և բարեկարգ հիւրանոց է, որան կից գտնվում են քաղաքային կրթը, ուրիշ մանր ճաշարաններ և կօնդուտներ: Այդ հրապարակի վրա է դէմ առ դէմ թիւրքաց «Ալլիգի» ղեկեղիկի մէջքը, որ նայում է բաւարարելի վրա (բերդը): Այդ տեղից դէպի աջ անցնելով հսկայի նման կանգնած է պ. Թալիբովի մեծ և սքանչելի շինութիւնը, որ նայում է ուղիղ ծովին, այդ շինութիւնն են գտնվում տեղիս առաջնակարգ վաճառատների, որոնց մէջ ամենից շուտով աճել է ընկնում մեր հայազգի հուշակաւոր Մանի կօմի-

սիների վաճառատներ, ուր մեծ քանակութեամբ շատ արժան քնով ապրանք է ծախվում: Ինչպէս երևում է, պ. Մանին լաւ է հասկացել պօրտօ-Քրքան-կայի իտիական նշանակութիւնը, որ նրա համեմատ արժան ապրանք է ծախում վաճառականներին նոյն ֆարքիայի դնով:

Սրբազան Թաղապետութիւնը այստեղ այնպէս փառաբանող հանդիսով կատարեցաւ, որ երբեք Բաթումը այսպիսի ուրախութիւն տեսած չէր: ամենի երեսը ուրախութեամբ փայլում էր և վր-կայում էր, որ յիշաւ մեր Բաթումի ժողովուրդին էլ սերտ սրտով կապված է: Կայարանի և հետո հիւսիսում ընկնող նրա ժողովուրդի հետ:

Աչքի էր ընկնում պ. Լեմիլ-օլլու տու-նը, որ երեկները փառաբանողների ճաշիկները անպակաս զգրում էին օդը և ճրագաւորութիւնը լուսաւորում երկինքը, նախանշաւոր խնդր շնորհակալութիւն յայտնեց նրան և միւս օրը ճաշին ի միջի այլոց և նրան հրաւիրեց իր մօտ: Այդ Լեմիլ-օլլին Տրապիզոնից շատ հարուստ թիւրք է և ղեկեղիկ շինութիւն ունի Բաթումում:

Ա. Թ.

ՆԱՄԱԿ ԱԽԱՅԻԱՅԻՑ

Մայիսի 25-ին

Այս անգամի նամակիս բովանդակութիւնն է,— մի հայեացք արեալքային երկրիս անտեսական և բաւարարական կեանքի վրա: Թող ընթերցողը չսփնկաւէ, որ ներդողներ և կարգաւոր զանազան անձանց զկիսին: Արեւելիայի հայերը մեծամասնութեամբ կարող զգովականներ են, նրանք այնպիսի մի քանի սովորութիւնները ժառանգաբար աւանդել են իրանց յաջորդներին,— գրեթե բոլորը ապրուստի միջոց որոնել, երկրները և առաւօտները վաղ սրճարաններում և ղեկեղիկներում հաւաքվել տրամաբանութիւն անկաւ, իսկ ղեկեղիկները տանը հանդիսութիւն: Ապրուստի միջոց որոնելում (այնին սպորտաւոր միջոցի համար է առաւս) արեւելիայի շատ չափաւոր է այժմ, նա երբեք չէ մտա-

մարդիկ, մենք իսկոյն և ի՞նչ վճռեցինք, որ շուտ չենք բաժանվի, բայց կապրենք և որսորդութիւն կանենք միտմին մի քանի շաբաթ շարունակ կոմսի կապի մէջ: Այդ վճիռը մենք չը յապաղեցինք ի կատար ածելու:

Մենք միշտ սիրում էինք միմեանց, և այդ փոխադարձ համակրութիւնը նորից զարթոյց ներկայ հանդիպումի ժամանակ: Դաշտերով, անտառներով և ճահճներով թափառելու ժամանակ թէ մէկի և թէ միւսի կողմից եղած անկեղծ վայր-մունքից յետոյ, նախկին մանկական, բնազդական մտերմութիւնը չը յապաղեց դառնալ դիտակցա-կան, հաստատ բարեկամութիւն:

Իմ քանի և մէկ տարին նոր էր լրացել, իսկ Ալեքսանդրը եօթը տարով ինձանից մեծ էր: Ես դեռ շատ ջանք էի, շատ կրքաւ էի, և իմ հա-մադմունքները դեռ ևս հաստատ արժանեք չէին բռնել, իսկ իմ աւելի փորձված բարեկամի մէջ զգացաւ ուրախութիւն պայծառութիւն նրա բոլոր հա-յացքների մէջ և բարոյական նեղուկ ինձ համար: Խոտովանում եմ, որ նա ամեն բանի մէջ արի-ութեամբ տեսար էր ինձ: Այնպիսով ինքս ինձ հաշիւ տալ նրա ինձ վրա ունեցած հանգիստ և ստոյգ ազդեցութեան մէջ, ես ինձ հարց էի ա-ռաջարկում, ինչ է տղամարդը:

Սկսեմ ժամանակներում տեսնում էինք մենք նրա մէջ մարմնացած ոյժ, բայց աստիճանաբար այդ ոյժի մասին հասկացողութիւնները, որոնք կազմում են արիականութեան էութիւնը, շատ փոփոխվեցան: Այդպէս, ժողովուրդների գաղափարութիւնները հետեւող դարերում, այդ ոյժը դուրս ֆիզիկական էր, ապա, կրօնական խռովութիւն-ների ժամանակ, հոգեկան, և, վերջապէս, այժմ նրան աւելի մտաւոր կարելի է անուանել: Բայց

ծով իր ապագան ապահովեցնելու համար դուրս գալ իր նահապետական դրութիւնից: Նա ըմբռնել է իր հին գործիքների ձեռք, առևտուրի մոտոցը, և երկրադարձական պարագաները: Նա առաջադիմու-թեան քայլ անելու եռանդ ունեցած չէ, նա չէ մտածում որ հանգամանքը փոփոխում է ամեն բան, և լուսաւոր երկրների արտադրութիւնը մըր-ցում է իրանց դէմ, հետեւ կորցնում են իրանց յարգը, և հարկաւոր է յարմարվել դարի հոսանքին: Իսկ, ընդհակառակը, պարագայութեան համար նա ստեղծել է զանազան «ծռաւորներ», արտադրե-րից հրապարակած նա ղեկեղիկներ և սրճարան-ները փոխանակել է «կաֆէ-րեսթորանի», հիւրա-նոցների, կրթչների և «բիւրօների», և առաւ-պիական տրամաբանութեանց հետ կարող խաղալ «մուլիկայով քէֆ» անել և կօւլէտ, քօսաթիւ ու-տել, իսկ դրանց հետեւողներն են գործից թու-լանալ և անապին: միջոցների դիմել: Այս այդ-պիսի հանգամանքներում մեզանում պարագայը չըմբռնելիք թիւր աւելանում է, աւելանում են նոյնիսկ և անբարոյական դրօնակարներ, իսկ սը-րանց, այսինքն վերջինների յաճախորդները լինե-լու են ընդհանուր մարդկութեան նախաւորել բերող անձինք, ունեն և խանութ դառարկող ամբարշտան-քը: Եկարագրածս հասարակութեան մի դասակարգն է, այժմ խօսքս առաջնակարգ պարսիներին եմ ուղղում: Վերջինները, որ մի ժամանակ յարց և պատիւ էին վաղելում առաջինից իրանց զգաստ կեանքով, բարեգործութեամբ և առատաձեռնու-թեամբ, այժմ նոքա էլ իրանց «աղայութիւնը» մէկի դրած, անհոգ, բաղձած են իրանց տե-ղի վրա: Կրթված երիտասարդութիւնն չը կայ-վեր միակ յոյժը մեր ուսումնարանների ա-պագայ սանիկների վրա է, բայց միթէ նը-րանք էլ ապականված ամբարն մէջ խառն-վելով, չը պիտի պղծվեն, երանի, թէ ենթադրու-թիւնս սուտ դուրս գար: Հասկանում եմ որ այս բաւարարում նախաւոր եմ և ինձ,— մի և նոյն ժամանակ արձագանք եմ տալիս համաբաղաբայ-նեքիս մարդկային պարտաճանաչութիւն ունենալ-այն, նախաւորել է մեզ արեւելիայիցներին, երբ փչացնող հիմնարկութիւնները օրից օր աւելաց-

նում ենք, և չենք հող տանում, բարոյական հիմ-նարկութիւններ հաստատելու: Քիչ թէ շատ լու-սաւորութեան հետեւողները այդ հասկանում են, բայց ինչ արած, երբ նրանց խօսքերը միշտ մնում են «ձայն բարբառոյ յանապատի»:

Կիրակնօրեայ վարժարանի համար քառասունի չափ պատանիներ և հասակաւոր մարդիկ խնդրա-մատոյց եղան ուսումնարանայ հոգաբարձութեան, որ միջնորդեն ուր հարկն է իրանց ցանկութիւնը իրագործելու: Ի՞նչ է ուրանում թէ ինչ բարոյական օգուտներ է մատակարարում ուսումնարանը, իսկ ուսումնարանական վարչութիւնը պատասխան չը տուեց խնդրատուներին: Ո՞վ պաշտպա-նեց «աղքատաց» հոգաբարձութեան գործունէու-թիւնը, ով ձայն բարձրացրեց, միջնորդեց ուր հարկն է, այդ օգուտակար հիմնարկու-թիւնը պաշտօնապէս հաստատելու, և գիտէք թէ ինչ օգուտ ունէր այդ հիմնարկութիւնը, հա-րիւր անօքնական գերաւատաններ ապրում էին ժո-ղովրդական սեղանի փչանքից, և հիմա միթէ չէ տանջվում մեր խիղճը, որ աղքատները ուղի տակ են գտնում, և մենք չենք կարող իւրաքանչիւրին միջոց տալ պատասխարկելու համար, սրանք դեռ չըմբռնեն են, իսկ գիտէք, թէ որքան կան ուժից ընկած անտիրականները:

Նրբորդ տարին է, որ ձայն կայ, թէ Ախալցը-խայում «Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկե-րութեան» մասնաճիւղը հաստատելու մտադիր են, անցան օրեր, իսկ մտադրութիւնը մնաց լոկ ձայն: Հողերակալաց ընթերցարան մը ունէինք, ուրտեղ մի ժամանակ այցելում էին հողերակա-նաց որդիքը: Տեսած եմ մի քանի քաղաքներում, որ հրապարակական ընթերցարանը յաճախում են ամեն դասակարգի մարդիկ, որը համարվում է ա-մենագոյնաւոր բարոյական հիմնարկութեանց մի, բայց ինչ արած, որ Ախալցխայի այդ բաղ-դին արժանացած չէ,— փոխանակ ղեկեղիկ-րի, սրճարանների և այլ անբարոյական հրա-պարակական տների վարակիչ հիւսնադրութեանց ենթակայ լինելուց, ունենալիք կիրակնօրեայ վարժարաններ, թատրոններ և նա մանաւանդ զը-րադարան-ընթերցարան, որտեղ միաբը և հոգին

բանի մասին: Մենք հէնց նոր էինք վերադարձել կոյսարներ որսալուց և, փոխելով մեր թրջված կօշիկները և շորերը, միտմին նստած էինք թէյի սեղանի մօտ: Պատասխանելով իմ հարցին, կոմսը ժպտաց:

—Կա շատ պարզ է,—ասեց նա,— փոխանակ թուղթ խաղալու և կանանց ետեւից ընկնելու, ես աշխատում եմ, որպէս հասարակ զիւղալի, և կարգի եմ բերում իմ խանդավառ կայքերս, փո-խանակ պարտքեր անելու, ես իմ հօր պարտքերն եմ վճարում: Բայց ես այնքան հեռու եմ կանանց արճամարհելու մտքից, որ միշտ անգամ հաստա-տապէս մտածում եմ պատկերելու վրա:

—Կոմս—բացականչեցի ես:

—Հէնց ես, այստեղ անհնարին է կարգ մեց-նել, մինչև որ ես լաւ կլին չեմ ունենայ:

—Կիցաւ, թէ այդպէս է, բայց որտեղ կը գտնես դու այդպիսի կին:

—Ես կամենում եմ գտնել այդպիսի մի կին,— պատասխանեց կոմսը իր մշտական աներկապու-թեամբ,— և կը գտնեմ նրան:

—Ուրեմն, ինձ միայն մնում է զարմանալ քո վստահութեան վրա ամուսնանալ մի ժամա-նակում և մեր կրթված հասարակութեան մէջ:

—Ինչու չէ,—ասեց կոմսը,— իմ կինը չի դա-ւաճանի ինձ, որովհետեւ ես այնպիսի մի տղա-մարդ եմ, որ կարող եմ աստիճանաւոր ձեռքիս պաշտպանել իմ պատիւը: Բայց դրանով չեն սա-նաւանդում իմ ցանկութիւնները: Ես կամե-նում եմ վիճակովս բաւական լինել և գիտենալ, որ իմ կինն էլ նրանով բաւական է: Թէ ինչպէս կը ձեռնարկեմ այդ գործին—միւս անգամ կը հա-ղորդեմ քեզ: Այդ կողմից ես բոլորովին ինձ յա-տուկ հայեալք ունեմ, բայց այսօր դու խիտ

ձուլվելով բարոյական կրթութեան բովի մէջ, պատրաստվելին ազնիւ քաղաքացիներ, հարադէտ արհեստավարներ և անխնայ մշակ երկրագործներ։ Ուսման ընթացքին, ձան, ձան, աւելի ոչինչ, բայց «զուսնայի» և այլ նուազարանների ձայնը աւելի ազդու է հնչում փափկութեան մէջ ընկղմած մեր անհոգ պարոնների ականջին, բայց արդեօք ընթերցարանի ձայնը արձագանք կը գտնի կարեկից սրտերի մէջ։

ՆԱՄԱԿ ՊԵՍԵՏՈՐՍԿԻՅ

Մայիսի 15-ին

Այս արդէն երեք շաբաթ է որ սկսված է այստեղ սեզոնը, բայց հանրային ջրերը այցելողներին թիւը դեռ երեք հարիւրի մօտ է։ Այս տարի յայտ կայ, որ եկողներ, մասնաւոր Անդրկովկասից շատ կը լինեն, որովհետեւ Արաքսի մոտ ջրերը ոչ ոքին չեն գրաւէ։ Այնքան ձմեռ թիֆլիսում բռնկուի Մոսկովից յայտնի ապացոյցեց բռնկական ժողովի մէջ, որ Արաքսի մոտ ջրերը գրեթէ զուրկ են ծմբի գաղից, ուրեմն չունեն առողջարար գործիքներ։

Այնքան տարիները այստեղ կը բնակէր քահանայ, եկեղեցիի չէ կաթ. այս տարի եկեղեցիին պատրաստ է բայց քահանայ չը կայ։ Մեր եկեղեցին լաւ տեղ է հիմնված՝ գլխաւոր փողոցի վրա, շատ սիրուն և բաւական մեծ քարէ շինութիւն է։ Եկեղեցու շինութեան համար 1876 թուին հողարարձու ընտրվեցաւ պատուաւոր բնակիչներից մէկը՝ Բաղդասար Խոնջայանցը և նրա առանձին աշխատանքով քանի մի տարւան միջոցաւ հաւաքվեցաւ 13 հազար ռուբլ. փող, մասնաւոր աւանդ հանրային ջրերը այցելող հայազգի հիւանդներից։ Եթէ տեղւոյն հասարակութիւնը բաւական է այս բոլորին հոգալու հայոց եկեղեցիով՝ նա բարոյապէս պարտական է պ. Խոնջայանցին՝ որովհետեւ հաղորդներ հաւաքել հայերից կարճ միջոցով անհաշիւ գումար գործ է, որչափ անմատչելի ամբողջ մը առնել։ Այժմ հայերը կարօտութիւն ունեն մի ուսումնասիրտ քահանայի կամ գոնէ կրթիչ տիարացուի և յանձն են առնում նպատակ վերջինիս նիւթականատեղ քահանայ ձեռնադրվելու ժամանակ։ Քահանան կարող է այստեղ ունենալ տարեկան արդիւնք առաւել քան հազար ռուբլ. հասարակութիւնը յօժար է նշանակել նրան տարեկան ուսման և յարմար բնակարան միայն այն պայմանով, որ նա իր պաշտօնից դատ՝ պարտադիր անպատճառ դատարարականութեամբ։

Անգոնի ժամանակ ամառը այստեղ գործում են 35 բժշկներ, որանցից միայն 10—12 մարդ ու-

նեն մեծ արակտիկա, մնացածները միջակ կամ չնչին արակտիկա ստանում են զանազան միջոցներով։

Այստեղ եկող հիւանդը շատ անգամ գոհ է լինում բնակիչների ձեռքով։ Եթէ գալով Պիտանի գործի չունի ծանօթ բժիշկ, նա հարկադրված է հարցնել կամ հիւանդից ծանօթներին կամ զանազան ազնեաներին և ֆակտորներին՝ որոնք կաշտված են գովելու իրենց բարեկամ բժշկներին։

Հասարակութեան մէջ մի սխալ համոզմունք կայ՝ իբր թէ այն բժիշկը հանրային ջրերի վրա առաւել հմուտ է բժշկութեան մէջ՝ որ շատ տարիներ ուսումնասիրել է այդ ջրերը։ Հանրային ջրերի յատկութիւնը իմանալու համար շատ տարիներ հարկաւոր չէ, բաւական է շատ շատ երկու կամ երեք տարի, բայց այն բժիշկը որը քան, երեսուն տարի բնակվում է հանրային ջրերի վրա և բժշկում է, բայց ժամանակակից ուսում չունի չէ կարող լաւ ճանաչել հիւանդութիւնը—նա անհոգութեամբ գործող է։ Ինչ օգուտ իմանալ ջրերի յատկութիւնը, երբ չես իմանում ինչ հիւանդութեան դեմ պէտք է գործածես այդ ջրերը. քանի որ բժիշկը լաւ դիագնոստիկ (հիւանդութիւնը ճանաչող) չը լինի թէ կաշտ նա հարկաւոր տարի ջրերը ուսումնասիրէ՝ ոչ մի հիւանդի օգուտ չի բերի։ Բայտ անբաղդութեան այդպիսի ժամանակակից ուսումով դիագնոստիկ բժշկներ այստեղ շատ սակաւ են։

Այստեղ վայելող բժշկները ժողովրդով հիւանդներ քանի հարիւրներով չունեն ֆիզիկական կարողութիւն մանրամասնաբար և բարեխղճութեամբ բժշկել ժամանակի պակասութեան պատճառով. շատ անգամ պատահում է որ այդպիսի բժիշկը մոռանում է իր հիւանդի ցար, և քանի անգամ հարց ու փորձ անում սկզբից։

Այստեղ կան բժշկներ, որոնք ամբողջ ամառը 60 հիւանդից աւել չեն ընդունում այն նպատակով՝ որ կարողանան բժշկել առանձին ուշադրութեամբ և բարեխղճաբար։

Այսպէս թէ այնպէս մեր տեղը եկող հիւանդը մեծ դժուարութիւն է քաշում բժիշկ ընտրելու մասին։ Առաւել լաւ կը լինէր եթէ հիւանդը իր քաղաքից կանխաւ իմանար՝ ում պէտք է իր մէջ գալով Պիտանի գործի։ Հակառակ դիպուածում նա հարկադրված կը լինի լսել այստեղ ստու գովասանութիւնները այս կամ այն բժիշկի կաշտված ֆակտորների բերնից և հեշտութեամբ կարող է ընկնել անհմուտ բժշկի ձեռքը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՎԱՐԱՐՈՒՄ մեղ գրում են որ այդտեղի քահանային ժողովը որոշեց թագաւոր կայսրի սրբազան օծման առիթով պահել քաղաքի հաշուով երկու որդեգիրներ միջնակարգ ուսումնարաններից միսի մէջ։

Նոյն տեղից մեղ գրում են որ նորերումս Արաքսի վտակներում վախճանվեցաւ մի յոյն ծերունի որ 110 տարեկան էր, բայց շատ առողջ և առողջ մարդ էր։

ԳՈՆԶԱՎԻ ԳԱՆՈՒՐ Բաղէնք գիւղից մեղ հաղորդում են հետեւեալ լուրը։ «Արդէն չորս ամիս է որ Բաղէնք գիւղի 250 տուն հայերը գրկված են իրանց հոգեւոր հովիւից, ժողովուրդը անճարացած ստիպված է մէկ և կէս օրվայ հեռաւորութեան վրա գտնվող շաբաթակ դիւղի իր հոգեւոր պետերի համար քահանայ հրաւիրելու։ Ցանկալի է որ նոր վիճակաւոր ուսուցիչները շուտով այս գիւղից դուրս մի քահանայ արժանացնեն։ Արդէն թիֆլիսի ուղարկված ձեռնադրվելու նախկին քահանայի որդին, որի վերադառնալուն ժողովուրդը անհամբեր սպասում է։»

Կիրակի 5-ին յունիսի, առաւօտեան, կայացաւ Արժեքումս թատրոնում «Հայոց Բարեգործական» ընկերութեան ընդհանուր ժողովը։

ՇՈՒՇՈՒՄ մեղ գրում են որ Գորիսում վերջին ժամանակները յայտնվել է անասունների մէջ մի տեսակ հիւանդութիւն, որ սկսվում է թոքերից և որի ժամանակ լինում է արիւնահոսութիւն, որ և պատճառում է մահ։ Այդ հիւանդութիւնը կարճ ժամանակում կոտորել է մօտաւորապէս 2500 տաւար Գորիսի վիճակում։ Նոյն հիւանդութիւնը պատահել է և եօթ տարի սրանից առաջ Սիսականի վիճակում և շատ թշուառութեան մէջ է դրել խեղճ դիւղական ժողովրդին։ Այժմ այդ անհասկանալի հիւանդութիւնը հետզհետէ սկսում է տարածվել դանազան մօտակայ գիւղերի մէջ, որից սարսափած է հողագործ գիւղական դասը։ Անհրաժեշտ հարկաւոր կը լինի բժշկական ուշադրութիւն դարձնել այդ անկուշ, զարհուրելի հիւանդութեանն առաջն առնելու համար, որի հետեւեալ լինում է թշուառութիւն և սով ժողովրդի մէջ։

Անդրկովկասեան տրանզիտ վերջնեւոց յետոյ, «Мокр. Вѣд.» լրագիրը առաջարկում է, որ Բաթումի մէջ էլ արդիւլի ապրանքների անմաքս մուտքը։

Յունիսի 5-ին կիրակի կայացաւ Թիֆլիսի թատրոնում Ս. Նունի օրիորդական դպրոցի չեքաւոր աշակերտներին օգտին կօնցեցաւ։ Կօնցերարին մասնակցում էին ա. տ. Ֆրիլէ, Տէրեանց, Կորգանովա, և պ. պ. Կորգանով, Օպօլինին և Չիթեանց։ Կօնցերարի տնօրէնուհի իշխանուհի Մէլքօւա էր։

Կօջորի քաղաքապետը յայտնում է, որ յունիսի 5-ից սկսած կերթեկներ թիֆլիսի և Կօջորի մէջ գիւղականներ օրը երկու անգամ։ Տեղերի դեմքը դիւղ ու գալու համար արժեն իւրաքանչիւր անձի համար 1 ռուբլ.։ Տոմարները թիֆլիսում կարելի է առնել Շաւիթովի պալլիսիւնում, որտեղից և ճանապարհ կընկնի գիւղականը, առաւօտեան 6 ժամին և 50 ռուբլին։ Կօջորից գիւղականը կերթայ ամեն օր երեկոյեան 5 ժամին։ Այդտեղ տոմարներ կարելի է ստանալ Գէնի հիւանդոցում և Ռօտնդապոլում։

Յայտնում են որ այսօրվանից «Մշակի» կարելի է գրվել կէս տարով։ Այս տարվայ դիւղ 6 ռուբլ է։ Խմբագրութեան հասցէն յայտնի է ամեն տեղի հայ հասարակութեանը, քանի որ այդ հասցէն «Մշակի» իւրաքանչիւր համարի ձեւակառն գրված է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հայրենիք» լրագիրը հաղորդում է, որ Ներսէս պատրիարքի վիշտորդութեամբ տէրութեան գահձից ամսական 2,500 դրուշ, այսինքն մօտ 210 ռուբլ. ուսման պիտի տրվի խորհման սրբազանին և այս հրամանը թէ պատրիարքին և թէ խորհմանին իմաց է տուած թիւրքաց կառավարութիւնից պաշտօնապէս։

«Վերնայի» «Neue Freie Presse» լրագիրը կարծում է որ անգլիական կառավարութիւնը յարուցել է հայոց խնդիրը միմիայն նրա համար, որ ազատ է իրան այն կաշկանդող պարտաւորութիւններից, որոնք բարձր են նրա վրա Կիւղոսի պայմանագրի դժուրութեամբ։ Կապաւորում, ինչպէս կարծում է աւստրիական թերթը, որ կրկնում է «Temps» ֆրանսիական լրագրի կարծիքը, կամենում է ամեն միջոցով աղատելու այդ իրան համար անյարմար դաշնագրից, որ թողել է նրան որդէս քաղաքական ժառանգութիւն, հանգուցալ ազգի ֆիզիօնֆիլիք։ Անգլիական կառավարութիւնը որդէս քաղաքական ժառանգութիւն, հանգուցալ սեր լրագիրները, պահանջում է թիւրքալից անորոշագրելի վերանորոգումներ, որպէս զի վերջ

յից նրա վրա իր մեծ անկեղծ աչքերով և ժպտելով պատասխանեց. ես բաղձն եմ։

—Չարմանալի առակ—բացականչեցի ես։ —Եւ ես յիշեցի այդ առակը, գեղեցիկ տիկին ուղերի մօտ նստած ժամանակ, չարմանալի կոնքը, և յանկարծ այնպիսի մի անպակելի ձգումով զգացի զէպի տուն, որ ուղղակի սիրտախնայ զրկելու ընկալ կառք և միայն այն ժամանակ հանգստացայ, երբ տեսայ մեր փայտեայ դաշտապետը իր ուսուսկան խաչով, երբ ծերունի Գէնիքիւրը զողորմուն ձեռքերով օղնեց ինձ կատրից դուրս գալ և երբ իմ հայրը, ուրախութեամբ չիտիվելով, առաջ ծանր կերպով բարձրացրեց իր գլխակը, կարծես թէ նա անձանութիւն էր բարեւում, բայց յետոյ արտասուելով փաթակվեց ի վրին։ Իմ բացակայութեան ժամանակ տանը չէի փոփոխութիւններ էին կատարվել։ Իմ մայրս վերջին ժամանակ էր մնացել իր տանը, որտեղ և մի անգամ ծանօթ էր իմ հայրը։ Եւ լրջօրէն խօսեցի նա վարչութեան զեկը ինձ յանձնեց։ Ես թաղվեցայ կայքի մէջ, որպէս փորձող իր որդի մեքենայի իրականական կեանք։ Կալուածքը, բացի փանայուց, դեռ բնաւորված էր մեծ պաշտօնի իմ միտքս դրի կարգ մտցնել նրա մէջ, որքան էլ անհնարին էր երեւում այդ թուրք ինձ չէր։

յոգնած ես ինձ լսեցու համար, և բոլորովին քնածի կերպարանք ունեւ։

—Ամենին։ —Մի քաշվիր, ես այդ լաւ տեսնում եմ։ Բաւական է, եթէ այժմ ես քեզ ասեմ, չարմանալեց նա, որ ես ամենին չեմ ժառանգում բերել այստեղ մեր այդպիսի անուանված կրթված օրիորդներից մէկին և մօղային կին բնակեցնել իմ տան մէջ։ Ես ես անցայ սիրոյ ուսումնարանի միջով և այդ պատճառով չեմ կամենում, որ այդ գիւտութեան վրա ծախսած փողերս իդուր կորչէին։

—Ասում են, իբր թէ դու Գօն-ժուան ես եղել։

—Նոյնպիսի Գօն-ժուան, որպէս և մարդասեպ։ Բացականչեց կոմսը։—Հաւատացիր, որ ես պահպանեցի աւելի մաքուր սիրտ, քան թէ սուրբ համարվածներից շատերը։ Բայց ես տղամարդ եմ և սիրում էի։ Ես ուսումնասիրում էի կանանց, նրանց բնութիւնը և ընդունակութիւնները։ Կարելի է, դու չես մոռացել, որ քան տարեկան հասակում ես արտասահման գնացի ուսումս վերջացնելու համար։ Իրօք, ես այցելեցի գերմանական համալսարանների և գիւղատնտեսական ուսումնարանների մի շարք, յետոյ գնացի Իտալիա, Սպանիա, Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստան, Ամերիկա և Արեւելք և մի և նոյն ժամանակ ման էի գալի ամեն տեղ բաց աչքերով և ականջներս չը խցած։ Ես քիչ չէի օտարացել, բայց ապրելով մարդկանց մէջ առաւել եւս ընդունեցի, որովհետեւ անդադար աշխատում էի ընդարձակել իմ դիտողութիւնների շրջանը։ Արեւմտեան մէջ ես պակասութիւն չը կար։ Կրկնում եմ քեզ, ես կարողացայ ուսումնասիրել կանանց։ Ես ինքս սիրում էի և

սիրված էի. կանանց ստրուկ էի և հարձեր էլ ունէի. քիչ էի տանջվում, ինքս էլ տանջանքներ էի պատճառում ուրիշներին. բայց վերջ ի վերջոյ ես խորին զղումեք զգացի զէպի այն լաւ հասարակութիւնը, որ մինք պատվում ենք, եթէ ոչ մինչեւ անգամ զէպի ամբողջ կրթված աշխարհը։ Կամայ կամայ զօրեղանում էր իմ մէջ ձգտում զէպի պարզութիւն, ընտելիւն և զէպի հայրենիք։ Այդպէս, զա շատ օտարախոս էր, ես մի տար ամառնային գիւղեր նստած էի մի նշանաւոր տիկնոջ ոտքերի մօտ—մերջինի, որին ես սիրում էի,—և խաղում էի այդ լէզիլի (տիկնոջ) խօսողալիքների հետ, այն ժամանակ, երբ խափշիլ աղախիւնը զովանում էր նրա բորբոքված այտերը արմատնում մեծ հովհաւում։ Այդ կատարվում էր Բերայում, նրա գեղեցիկ դատարաններում։ Մեր ստաների մօտ ծիւղում էր Բօսֆօրը, իսկ գլխներին վրա տարածվում էր Արեւելքի աստղալիկ երկինքը։ Ցանկաւոր, առանց որ և է պատճառի, միաքս եկաւ մի առակ, որ իմ զայալով պատմում էր ինձ մանկութեան ժամանակ. դու երեխ յիշում ես, այդ առակը բաղդաւորութեան մասին է։

—Ոչ, չեմ յիշում։ —Չը պատմել արդեօք։ —Ինչոքն։

Մի ժամանակ ապրում էին երեք եղբայրներ մեծ միջին անտառի մէջ կապույտ ծովի մօտ։ Մի անգամ առաջ եղբայրը տանք. անտառի այն կողմը կան ընտանիք, իսկ նրանց ետեւից գտնվում է մի ընդարձակ պտղատու երկիր։—Իսկ միւս կողմը, նկատեց երկրորդը,—գտնվում է մեծ կապույտ ծով, և նրա ետեւ հարուստ քաղաքներ կան։ Աստուած միայն գիտէ,—պատասխանեց նրանց կրտսերը,—արդեօք այնտեղ կան այնպիսի ծա-

29-100